ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2013 թվականի N 444-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 266 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 15-րդ և 17-րդ կետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N 11 որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի հուլիսի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում խորհուրդների անվանական կազմը հաստատելու և առաջին նիստերը գումարելու մասին>> N 266 որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 83-րդ կետի <<*Գալստյան Հայարփի*>> բառերը փոխարինել <<*Տոնապետյան Կարինե*>> բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնին՝ սույն որոշման մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ